

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՄԿԾ) ՄԱՍՆԱԳԻՐԸ

Ծրագրի անվանումը և մասնագիտության դասիչը	011401.19.7 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
Որակավորման աստիճան	Մանկավարժության մագիստրոս
Ուսուցման լեզու	Գրական հայերեն
Ուսուցման ձևը	Առկա, հեռակա
Ուսուցման տևողությունը	Մանկավարժության մագիստրոս, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում 2 տարի է, հեռակա ուսուցման տևողությունը՝ 2,5 տարի:
Արտոնագրում	Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա № 0023, 2016թ.):
ՄԿԾ-ի մուտքի պայմաններ	Մանկավարժության մագիստրոս, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի աստիճան և հաջողությամբ հանձնած լինի ընդունելության քննություն կամ ընդունվի հարցազրույցով:
Ծրագրի նպատակը	<p>Ծրագրի նպատակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ◆ Ծրագրի նպատակն է նախապատրաստել բարձր որակավորում ունեցող և անհրաժեշտ կոմպետենցիաներ ձեռք բերած մասնագետներ՝ տարբեր տիպի ուսումնական հաստատություններում, մասնագիտացված գիտահետազոտական հիմնարկություններում աշխատելու համար: Ծրագիրը կնպաստի հայոց լեզվի և գրականության բնագավառում այնպիսի կադրերի պատրաստմանը, որոնք ունակ կլինեն կատարելու բարդ առաջադրանքներ մասնագիտությանն առնչվող բնագավառներում՝ կրթություն, մանկավարժություն, գիտություն՝ նպաստելով գիտության առաջընթացին բանասիրության ոլորտում: ◆ Ձևավորել ձեռք բերած բանասիրական և մանկավարժական գիտելիքները գիտահետազոտական, մանկավարժական և այլ բնագավառներում կիրառելու կարողություն և հմտություն: ◆ Նպաստել հետազոտող բանասեր-մանկավարժի մակարդակով հայոց լեզվին և գրականությանը տիրապետելուն: ◆ Ձևավորել մագիստրատուրայի շրջանավարտի մոտ բանասիրական ցանկացած տեքստերի (գրավոր, բանավոր և էլեկտրոնային) հետ աշխատելու կարողություն և հմտություն:
Ծրագրի վերջնարդյունքները	<p>Ա. Մասնագիտական գիտելիք</p> <p>Ա1. համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,</p> <p>Ա2. ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին</p>

	<p>մասերի միջև կապերի իմացություն,</p> <p>Ա3. հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,</p> <p>Ա4. դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),</p> <p>Ա5. քննադատորեն գնահատել և մեկնաբանել տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,</p> <p>Ա6. տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները,</p> <p>Ա7. ցուցաբերել ինքնուրույնություն և ստեղծագործական, մանկավարժական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս:</p> <p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Բ1. ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման միջոցների և մեթոդների որոշում և զուգակցում,</p> <p>Բ2. ուսուցման գործընթացի համակողմանի ախտորոշում և վերլուծություն կատարելու և դրա հիման վրա կրթության որակի գնահատման համակարգ ձևավորելու ունակություն):</p> <p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <p>Գ1. կազմակերպելու և պլանավորելու ունակություն,</p> <p>Գ2. քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,</p> <p>Գ3. հետազոտություններ կատարելու ունակություններ,</p> <p>Գ4. նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,</p> <p>Գ5. ինքնուրույն աշխատելու ունակություն,</p> <p>Գ6. նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն:</p>
<p><i>Մասնագիտական գործունեության ոլորտները</i></p>	<ul style="list-style-type: none"> ➤ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրոսը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները` ➤ Տարբեր տիպի ուսումնական հաստատություններում` որպես

	<p>հայոց լեզվի և գրականության ուսուցիչ,</p> <ul style="list-style-type: none"> ➤ Մասնագիտացված գիտահետազոտական հիմնարկություններում, թանգարաններում, արխիվներում՝ որպես մեթոդիստ, գիտաշխատող, ➤ հրատարակչություններում՝ լրագրող, սրբագրիչ, խմբագիր, ➤ Հայոց լեզվի և գրական խմբակների ղեկավար:
<p>Հետագա ուսման հնարավորությունները</p>	<p>«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ է կրթությունը շարունակելու.</p> <ul style="list-style-type: none"> - մագիստրատուրայում՝ ստանալու մագիստրոսի որակավորում այլ մասնագիտության գծով, - ասպիրանտուրայում:
<p>Դասավանդողին ներկայացվող պահանջները</p>	<p>1. Ընդհանրական կարողություններ</p> <p><i>Դասավանդման/մանկավարժական</i></p> <p>Դասավանդողը պետք է ունակ լինի՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, • մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ, • կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ, • կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ, • զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները, • կազմելու դասընթացի փաթեթ: <p><i>Հետազոտական</i></p> <p>Դասավանդողը պետք է ունակ լինի՝</p> <ul style="list-style-type: none"> • իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ, • վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը, • կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ: <p><i>Հաղորդակցման</i></p> <p>Դասավանդողը պետք է ունակ լինի՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ, • արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցերը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,

- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

SՀS կիրառության

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail),
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ:

2. Մասնագիտական կարողություններ

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

3. Ընդհանուր պահանջներ գիտական գործունեությանը

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Գիտական աստիճանի և կոչման առկայություն/ցանկալի է բակալավրիատում, պարտադիր՝ մագիստատուրայի համար/:
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:
- Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ: